

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌԱՆՈՒԹՅԱՆ

(1971, հուլիս-դեկտեմբեր)

## ԲՈՒՂԱՐԻԱ

Բուլղարիայում լույս է տեսել Եղիշե Չարենցի բանաստեղծությունների հատընտիրը, որում ամփոփված են մեծանուն բանաստեղծի լավագույն գործերը: Թարգմանությունը կատարել է բուլղար անվանի երիտասարդ բանաստեղծ Անգրեյ Գերմանովը՝ օգտվելով Չարենցի ռուսերեն և Կ. Հայրապետյանի ու Մ. Պողոսյանի տողացի բուլղարերեն թարգմանություններից:

Գրքի համառոտ նախաբանում թարգմանիչը ընթերցողներին ծանոթացնում է բանաստեղծի կյանքին ու ստեղծագործական անցած ուղուն: «Չարենցը, — գրում է Գերմանովը, — գովերգում է արեր, հեղափոխության հրդեհները և ամբոխների պողկոմը... Չարենցը մեծ է, իսկական բանաստեղծ»:

«Երևան», 25 հունիսի

\* \* \*

Սոֆիայում լույս է տեսել Սարգիս Փաշաճյանի «Հուշամատյան Ռոտոսթոյի հայերուն» (1606—1922) գիրքը՝ 270 էջով, որտեղ ցույց է տրված Ռոտոստոյի հայ գաղութի պատմությունը:

«Ջարթոնք», 26 դեկտեմբերի

## ՌՈՒՄԻՆԻԱ

Վերջերս «Միներվա» հրատարակության կողմից «Ամենուն մատենագրանը» ժողովածուում վերահրատարակվել է «Սասունցի Դավիթը»: Առաջին անգամ «Սասունցի Դավիթը» ռումիններեն լույս է տեսել 1965 թ. Նիքոլաե Թեյքի թարգմանությամբ «Վիթեթի տին Սասուն» (Սասունի քաջերը) վերնագրով:

Վիկտոր Բերլերախը, որ գրքի առաջարանի հեղինակն է, գրում է. «Դավիթ աղդային հերոսն է, բանալին դուրացիների գոյության, զոր կկարգանք այս գրքին մեջ, բայց, միաժամանակ, հրաշալի բանալի մը հոգեբանական նշանակություններուն աղգի մը, անոր ամբողջ գոյության ընթացքին»:

«Նոր կյանքի» թղթակցությունից տեղեկանում ենք, որ «Սասունցի Դավիթ» հրատարակու-

թյունը մեծ հաջողություն է գտել ռումինացի ընթերցողների շրջանում:

«Նոր կյանք», 20 օգոստոսի

\* \* \*

Ռումինիայի արևելագետների ընկերությունը վերջերս Բուխարեստի պատմության թանգարանի սրահում կազմակերպել է Միլանի Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունների կենտրոնի ճարտարապետ Հերման Վահրամյանի դասախոսությունը «Հայկական միջնադարյան ճարտարապետությունը» թեմայով: Հ. Վահրամյանը դասախոսությունը զուգընթաց ցուցադրել է հարյուրավոր լուսապատկերներ:

«Նոր օր», 22 հոկտեմբերի

## Գ Դ Հ

Դրեղդենում հրատարակվել է գերմանուհի էգիթ Նոյրաուերի «Հայկական ճարտարապետությունը IV—XIV դարերում» գիրքը: Այն ունի ծանոթագրություններ, օգտագործված գրականության ցանկեր: Գրքում զետեղված են 111 լուսանկարներ և գծանկարներ, ինչպես նաև Հայաստանի քարտեզը:

«Երևանյան Երևան», 8 դեկտեմբերի

## ԼԻԲԱՆԱՆ

Բեյրութում լույս է տեսել «Հուշամատյան Մուսա լերան» գիրքը, Ջեբել-Մուսայի հայրենակցական միության նախաձեռնությամբ: Գիրքը խմբագրել են գրողներ Մարտիրոս Գուշաղճյանը և Պողոս Մատուռյանը:

Գրքում հանգամանորեն խոսվում է Ջեբել-Մուսացիների մասին, տրված են Անտիոքի և շրջակայքի պատմական-տեղագրական, ազգագրական, բանահյուսական տեղեկություններ: Ներկարագրված են բռնագաղթն ու տեղահանությունը, գավառի 1919—1939 թթ. պատմությունը և այլն: Գիրքը բաղկացած է 878 էջից:

«Արարատ», 14 օգոստոսի

\* \* \*

Բեյրութում, նոյեմբերի 2-ին բացվել է Թեքեյան մշակութային միության կենտրոնի 10 հարկանի նորակառույց շենքը, որտեղ տեղավորվելու են Թեքեյան մշակութային միությունը, «Զարթոնքի» խմբագրությունը, Թեքեյան երիտասարդական միության կենտրոնը և այլն:

Հանդիսավոր բացմանը ներկա են եղել մոտ 2000 մարդ, լիբանանյան կառավարության անդամներ, արաբ մտավորականության ներկայացուցիչներ և բաղձաթիվ հյուրեր արտասահմանից:

Պրոֆ. Բարունակ Թովմասյանի ողջունի խոսքից հետո ելույթ են ունեցել Տիգրան Սըմսարյանը (ԱՄՆ-ից), պրոֆ. Արշավիր Կեռնճյանը (Կանադայից) և Պերճ Սեդրակյանը (Բեյրութից): Վերջում շնորհավորական խոսք է ասել և հաջողություն մաղթել Լիբանանի Հանրապետության կրթական նախարար Նաժիպ Ապու Հալտարը:

Ստացվել են բաղձաթիվ ողջունի հեռագրեր:

«Հարթոնք» 2, 4 նոյեմբերի  
«Արարատ», 4 նոյեմբերի

\* \* \*

Բեյրութի Սին էլ Ֆիլի քաղաքապետությունը վերջերս հայկական անուններով է կոչել շրջանի գլխավոր պողոտաներից մի քանիսը, ներանց տալով «Երևան», «Անդրանիկ», «Վարդան», «Կոմիտաս» և այլ անուններ:

«Ջահակիր», 4 նոյեմբերի

\* \* \*

Լիբանանցի նշանավոր բանաստեղծ Սաիդ Աբյր «Էլ Ժերիտե» թերթում «Արար մտավորականները հայ ցեղին հյուրերը...» խորագրով թղթակցություն է տվել Թեքեյան մշակութային միության կենտրոնի բացման կապակցությամբ: Բանաստեղծը շնորհակալական խոսք է ուղղել հայերին՝ Բեյրութում հայկական մշակույթի պալատ կառուցելու համար, որից պետք է օգտվի նաև արաբ մտավորականությունը:

«Զարթոնք», 18 նոյեմբերի

\* \* \*

Վերջերս Բեյրութում լույս է ընծայվել Ֆրանսիացի հայագետ, պրոֆ. Պոլ էմիլի «Հայոց պատմություն» գիրքը, որը արարել են է թարգմանել Շուբրի Ալավին: Գրքի 8 բաժինները համառոտակի ներկայացնում են հայ ժողովրդի պատմությունը հին շրջանից մինչև մեր օրերը:

«Երեկոյան Երևան», 8 դեկտեմբերի

## ՍԻՐԻԱ

Հալեպում դուկտ. Ռուպեր Ճեպեճյանը իր միջոցներով հիմնել է «Վիտելթ Ճեպեճյան գրադարան», որին հովանավորում է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Ձեռք են բերվել հայոց պատմության վերաբերյալ արժեքավոր գրքեր, թերթեր, հանդեսներ, հուշամատյաններ և այլն:

«Պայքար», 31 հոկտեմբերի

## ԻՐԱՆ

Նոր Ջուղայի ս. Ամենափրկչյան վանքին կից Գալուստ Կյուլյենկյան հիմնարկության օժանդակությամբ ստեղծվել է թանգարան, որտեղ ցուցադրված են հայ հին ձևագրեր, ձեռագիր շարականներ, ժամագրքեր և այլ հիշատակարաններ՝ շուրջ 900 կտոր: Ցուցադրված են նաև ատաղձագործ-փորագրիչների աշխատանքներ, կաթիլիկոսական կոնդակների հավաքածու, Ղուրանի գրաբար թարգմանությունը, հախճապակե իրերի ընտիր հավաքածու, հաղվագյուտ դրամների հավաքածու, ինչպես նաև ևսրոպական հուշակավոր նկարիչների գործեր և այլն:

«Զարթոնք», 25 դեկտեմբերի

## ՖՐԱՆՍԻԱ

«Հայաստանը երեկ և այսօր». այսպես է կոչվում գունավոր վավերագրական ֆրանսիական այն ֆիլմը, որ ստեղծել է ռեժիսոր Նադին Ռորինը: Ֆիլմը ստեղծելու նպատակով նա այցելել է Հայաստան և համփորոշել ծայրից ծայր, նկարել է Հայաստանի պատմական հնագույն հուշարձանները, արդյունաբերական, դյուղատնտեսական և մշակութային օբյեկտները:

«Զարթոնք», 8 օգոստոսի

## ԱՆԿԻՒԱ

Լոնդոնի «Հարթ» հրատարակչությունը լույս է ընծայել էդուարդ Գյուլբեկյանի «Հայկական մամուլի ցուցակ 1971» գրքույկը, որը 1967 թ. հեղինակի կողմից հրատարակած ցուցակի լրացրած օրինակն է:

Ցուցակն ընդգրկում է 400 անուն թերթ ու պարբերական, որ հրատարակվում են Սովետական Հայաստանում և սփյուռքում: Հեղինակը ջանացել է տեղեկություններ տալ յուրաքանչյուր թերթի կամ պարբերականի մասին, նշելով հիմնադրության թվականը, տպաքանակը, Գրքի վերջում տպագրված է նաև սովետահայ և ռուս-փյունթահայ մատենագիրների ու հրատարակատների ցուցակը: Առաջաբանում Գյուլբեկյանը խնդրում է հայկական բոլոր թերթերի խմբա-

դիրներին «Հարք» հրատարակությանը տեղեկացնել մամուլի հրատարակության գործում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

«Ջահակիր», 14 հոկտեմբերի

#### ԻՏԱԼԻԱ

Իտալացի ռեժիսյոր Լուիջի Ալբերտոնին ստեղծել է վավերագրական ֆիլմ, ուր ներկայացված են հայկական ցեղասպանությունը և նրա շարժառիթները: Ֆիլմը կոչվում է «Ուլ կհիշես հայերը»: Կինոնկարի իրականացման համար ռեժիսյորը օգտվել է Արմին Վեգների 1914-ի ջարդերի և հայերեն գրքերի լուսանկարներից ու իտալացի ժամանակակից նկարիչ Անսելմոյի «Լը Մասաբըր» («Ջարդը») նկարների շարքից: Ֆիլմը սկսվում է Թալեաթի հայտնի հեռագրով՝ հայերին բնաջնջել առանց տարիքի ու սեռի խտրության և վերջանում է հայկական վերածնունդը պատկերող կադրերով:

«Ջահակիր», 29 հուլիսի

#### ՈՒՐՈՒԿՎԱՅ

Մոնտեվիդեոյի հայ գաղութի նախաձեռնությամբ քաղաքի հրապարակներից մեկը ստացավ «Արմենիա» անունը: Քաղաքապետության հրամանագրով այդ արարողությունը տեղը է ունեցել հոկտեմբերի 12-ին, որին ներկա է զբոսնել Մոնտեվիդեոյի քաղաքապետը՝ պր. Մարիո Բեյրոնին:

Հոկտեմբերի 24-ին նույն «Արմենիա» հրապարակում տեղի է ունեցել ուրուզվահայության կողմից երախտագիտության և հավատարմության անկեղծ արտահայտություն հանդիսացող հուշակոթողի բացումը, որի վրա գրված է. «Ուրուկվայ, ընդունե՛ք որդեգրած զավակներուդ երախտագիտության և հավատարմության խորհրդանշանը»: Արարողության ժամանակ, որին ներկա էր քաղաքապետ Մարիո Բեյրոնին, կատարվում են Սովետական Հայաստանի և Ուրուգվայի հիմները, հրապարակի վրա ծածանվում են երկու երկրների դրոշները:

«Ջահակիր», 4. 18 նոյեմբերի

#### Ա Մ Ն

Նյու-Յորքում լույս է տեսել պատմաբան Մարջրի Հովսեփյանի «Ջմյուռնիո հարցը» գիրքը, ուր տրված է քաղաքի հայ գաղթօջախի պատմությունը: Գրքի վերջին դրվաններում նրկարագրված է ղմյուռնահայերի կոտորածը 1922 թ. սեպտեմբերի 9-ին: Հեղինակը օգտագործել է արխիվային նյութեր, հարուստ գրա-

կանություն, ականատեսների վկայություններ և այլն:

«Պայքար», 26, 28 օգոստոսի

\* \* \*

Հարվարդի համալսարանի հայագիտական ամբիոնը որոշել է 1971—72 ուսումնական տարում ստեղծել նոր դասընթաց՝ «Հայկական քաղաքակրթությունը», որը դասավանդելու է ամբիոնի վարիչ դոկտ. Ռոբերտ Թոմսոնը:

«Պայքար», 29 օգոստոսի

\* \* \*

Ֆրեզնո քաղաքի կենտրոնական պարտեզում քաղաքապետության արտոնությամբ կանգնեցվել է Սասունցի Դավթի արձանը, որը քանդակել է նկարիչ և արձանագործ Վարազ Սամվելյանը:

«Նոր օր», 31 օգոստոսի

\* \* \*

Հարվարդի համալսարանում, հոկտեմբերի 28-ից մինչև 30-ը, տեղի է ունեցել հայագիտական գիտաժողով՝ նվիրված «Իշխանությունը և ռամկավարությունը հայ հասարակության մեջ» թեմային:

Գիտաժողովը կազմակերպել են՝ Համազգային հայագիտական միությունը, Հարվարդի համալսարանի միջին արևելյան լեզուների և գրականությանց բաժանմունքը և Միջին Արևելքի Ուսմանց կենտրոնը:

Առաջին նիստին «Հայկական թագավորության մեջ իշխանության և ռամկավարության կիրառումը» թեմայով զեկուցել է Հարվարդի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռոբերտ Թոմսոնը: Կոլումբիայի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ պրոֆ. Նինա Գարսոյանը զեկուցել է «Արշակունիների պարսկական դիմագիծը» թեմայով: Լոնդոնի համալսարանի կովկասագետ և «Հայաստանը քաղաքակրթության օրրան» գրքի հեղինակ պրոֆ. Դևիդ Մարշըլ Լենգը խոսել է Բագրատունիների, Հայաստանում և Վրաստանում նրանց հիմնադրած թագավորությունների մասին, արվեստի և մշակույթի բնագավառներում կատարված նվաճումների և նրանց կազմակերպած ավատապետական իշխանությունների բնույթի մասին:

Այնուհետև զեկուցումներ են կարդացել Հարվարդի համալսարանի դասախոս, դոկտ. Վարդան Արմինյանը, Կալիֆորնիայի համալսարանի միջին արևելյան լեզուների բաժանմունքի և հայագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. Ավետիս

Սանճյանը, Նյու-Յորքի Բինգհեմստրն նահանգային համալսարանի պրոֆ. Հրայր Տեքմեճյանը և ուրիշներ:

Գիտաժողովի վերջին նիստը նվիրված էր «XX դարու հայ ընտանեկան կյանքը» հարցին: Զեկուցումներ են կարդացել Նյու-Յորքի քաղաքային համալսարանի դասախոս, դոկտ. Զեկ Կանիելյանը, Բոստոնի համալսարանի դասախոս, դոկտ. Ռոբերտ Մայրաքը, Նյու-Յորքի նահանգային համալսարանի՝ դասախոս պրոֆ. Վահագն Տատրյանը:

«Պայքար», 14 նոյեմբերի

\* \* \*

Լույս է տեսել Հովհ. Թումանյանի ժողովածուն անգլերեն՝ «Լոռիի երգիչը» վերնագրով, Միշա Դյուտյանի թարգմանությամբ: Գրքում զետեղված են «Անուշը», «Աղթամարը», «Գիւրգը», «Անբախտ վաճառականները», «Շունն ու կատուն» և այլ գործեր:

«Լրարեր», 30 նոյեմբերի

\* \* \*

Լոնդոնի համալսարանի կովկասագիտության պրոֆեսոր Դեվիդ Մարշըլ Լենգը, որ հեղինակն է «Հայաստանը քաղաքակրթության օրրան» գրքի, Հարվարդի համալսարանում հոկտեմբերի 26-ին դասախոսել է «Հայաստանը և Կովկասը դարերու մեջեն» թեմայով:

Նա հակիրճ պատմել է հայ ժողովրդի անցած պատմական ուղու մասին, ծանրանալով հատկապես համաշխարհային մշակույթի մեջ նրա կատարած ներդրումների վրա, մասնավորապես անդրադառնալով ճարտարապետությանը

և մանրանկարչությանը: «Ժամանակն է, որ հայ ժողովուրդը արժանանա իր արդար գնահատանքին»,— գրում է նա: Ինչպես հայտնում է «Զարթոնքի» թղթակիցը, «Փրոֆ. Լանկ խոր ափսոսանքով խոսեցավ թուրք իշխանություններուն անտարբերության մասին, որուն զոհ կերթան հայ հնադարյան մշակույթի կոթողները»:

Պրոֆ. Լենգը ցուցադրել է մի շարք նկարներ Սովետական Հայաստանից, Արևմտյան Հայաստանից և Վրաստանից:

Այնուհետև համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ պրոֆ. Ռոբերտ Թոմսոնը ներկաներին ծանոթացրել է պրոֆ. Լենգի վերջին գրքի հետ, որը լույս է տեսել Լոնդոնում «Քաղաքակրթության պատմությունը» շարքով: Այս գիրքը վերաբերում է Հայաստանի և Վրաստանի հին պատմությանը:

«Զարթոնք», 3 դեկտեմբերի

\* \* \*

Ալիս Օտյան Գասպարյանի հեղինակությամբ լույս է տեսել «Պատմագիրք Անկյուրիո և Ստանդի հայոց» գիրքը, որ բաղկացած է 247 էջից, ունի քարտեզներ և պատկերազարդ էջեր:

«Պատմագիրքը» ունի «Պատմական ակնարկ» (Անկյուրիա և Ստանդ), «Ստանդի բարբառը», «Պատմական տեղեկություններ», «Պանոթություններ, հուշեր» և այլ բաժիններ:

Այս աշխատանքը արժանացել է Բեյրութի Թեքեյան մշակութային միության Հայկաշեն Ուղունյան գրական մրցանակին:

«Պայքար», 7, 8 դեկտեմբերի

Ն. ՎԱՐԻԱՆՅԱՆ